ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի պետ Հասմիկ Տիգրանյանի և Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի գլխավոր մասնագետ Տաթևիկ Խաչատրյանի՝ Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա) գործուղման արդյունքների վերաբերյալ

Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ Հասմիկ Տիգրանյան, Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի պետ, Տաթևիկ Խաչատրյան, Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի գլխավոր մասնագետ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա), 2023թ. հունիսի 11-ից 17-ը:

Հրավիրող կողմը՝ ՄԱԿ-ի Թմրանյութերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակ (UNODC):

Գործուղման նպատակը՝ մասնակցություն ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) անդամ երկրների Կիրարկման վերանայման խմբի 14-րդ և Կոռուպցիայի կանխարգելման Բաց կազմի միջկառավարական աշխատանքային խմբի 14-րդ նիստերին:

Քննարկված թեմաները՝ մասնավոր հատվածում կոռուպցիայի դեմ պայքար, Կոնվենցիայի շրջանակներում ոլորտային հասարակական կազմակերպությունների

ներգրավման մեխանիզմներ, Կոնվենցիայի անդամ երկրների՝ Կոնվենցիայի 2-րդ և 5-րդ գլուխների դրույթների շրջանակներում լավագույյ փորձի փոխանակում:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Կոնվենցիայի կիրարկման վերանայման նիստին Հասմիկ Տիգրանյանը ներկայացրել է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայով սահմանված պարտավորությունների գնահատման շրջանակում ՀՀ տրված հանձնարարականների կատարման ընթացքը և դրանց ուղղությամբ արձանագրված ձեռքբերումները՝ անդրադառնալով հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ամրապնդմանը, բարեվարքության ստուգման մեխանիզմների շարունակական կատարելագործմանը, հակակոռուպցիոն քաղաքականության մշակման գործընթացներում ներառականության ապահովման ՀՀ գործող մեխանիզմները:

Կոնվենցիայի Կոռուպցիայի կանխարգելման Բաց կազմի միջկառավարական աշխատանքային խմբի նիստին Հասմիկ Տիգրանյանը ներկայացրել է կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում ֆինանսական վերահսողական գործառույթներ իրականացնող մարմինների դերակատարման, կանխարգելման և հակակոռուպցիոն իրավապահ մարմինների միջև համագործակցության իրավական գործիքակազմի ՀՀ փորձառությունը և նախատեսվող բարեփոխումները:

Հասմիկ Տիգրանյանը մասնավոր հատվածում կոռուպցիայի դեմ պայքարի միջկառավարական պանելային քննարկման ընթացքում ներկայացրել է մասնավոր հատվածում բարեվարքության ուղղությամբ արձանագրված առաջընթացը և ներկայումս մշակման փուլում գտնվող նոր՝ 2023-2026թթ հակակոռուպցիոն ռազմավարությամբ մասնավոր հատվածում կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված ռազամավարական նպատակի ներքո նախատեսվող բարեփոխումները:

Տաթևիկ Խաչատրյանը մասնակցել է Կոնվենցիայի անդամ երկրների Կոնվենցիայի կիրարկման վերանայման մեխանիզմի կատարելագործման վերաբերյալ քննարկմանը, ներկայացրել է Կոնվենցիայի 2-րդ և 5-րդ գլխուներում ամրագրված դրույթների շրջանակներում Հայաստանի Հանրապետության

ձեռքբերումները, կոնվենցիոն պարտավորությունների գնահատման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով առաջարկություններ:

Տաթևիկ Խաչատրյանը մասնակցել է Կոնվենցիայի շրջանակներում ոլորտային հասարակական կազմակերպությունների ներգրավման մեխանիզմների վերաբերյալ քննարկմանը և ներկայացրել հակակոռուպցիոն գործընթացներին ոլորտային ՀԿ-ների ներգրավվածության ՀՀ փորձը, Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի և հակակոռուպցիոն աշխատանքային խմբերի գործունեությունը և ձեռքբերումները, ներկայացրել առաջարկություններ Կոնվենցիայի շրջականում ՀՀ ՀԿ-ների ներգրավվածության աջակցության մեխանիզմներ նախատեսելու համար:

Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման
և մոնիթորինգի վարչության պետի պաշտոնակատար՝

Հասմիկ Տիգրանյան
22.06.2023թ.